ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆԵՐ

ԳՐ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

III

Ոչ մի տարի Թիֆլիսում չենք ունեցել այնքան համերգական երեկոներ, որքան այս տարի և այդ երեկոներ լաճախողների թիւն էլ այս տարի անցեալ տարիներից անհամեմատ մեծ էր։ Հասարակութիւնը ուրախութեամբ էր լաճախում այդ համերգական երեկոները, ուշադրութեամբ լսում էր և մինչև անգամ պահանջում կրկնելու մի քանի №№ (կտորները)։ Մի խօսքով համերգական երեկոները հասարակութեանը դուր եկան և այդ ամենի համար պէտք է շնորհակալ լինել պ. Խալալիտով-Իւանովին, որը լանձն առաւ անվարձ կազմակերպել հինգ համերգական երեկոներ մեծ պասի ընթացքում։

Այդ կոնցերտներում կատարւում էին զանազան պիէսներ, ինչպէս դասական, նոյնպէս և ժամանակակից բէպերտուարից։ Իբրև սոլիստներ բեմ դուրս եկան տիկ. Ռուտիլովա, պարոններ՝ Սարաջև, Կոլչին, Պրեսման և ուրիշները։ Ես մանրամասնաբար չեմ քննադատելու բոլոր կատարած կտորները, նոյնպէս մանրամասնաբար չեմ կանգ առնել բոլոր սոլիստների արժանաւորութիւնների վրայ։ Այսքանը միայն կասեմ, որ տիկ. Ռուտիլովան լաւ նւագող է, կատարելագործած մեքանիկականութեամբ և որ առհասարակ նրա խաղը ամբողջ մի տպաւորութիւն է թողնում. միայն մի բան աչքի է ընկնում. այդ նրա կոտրուելն է ածելու ժամանակ։ Ցիկլինը անհամեմատ աւելի մեծ տպաւորութիւն կը գործէր, եթէ կարողանար իրան հանգիստ և շնորհալի պահել դաշնամուրի առջև, ինչպէս այդ պահանջում է դաշնամուրի նորագոյն շկոլան։ Պր. Սարաջևը հիանալի վիոլոնչելիստ է և լաւ երաժիշտ, ափսոս միայն, որ նրա դործիքը երբեմն ճռնչում է, բայց դա հէնց իրա գործիքի մեղն է և ոչ նրա տիրոջ։ Պր. Կոլչինը, տէր Աստուած! մինթէ կարելի է նրան ջութակահար սոլիստ անուանել։ Ճշմարիտ է նա լաւ մեքանիկա ունի,

հիանալի ջութակ, բայց այդ ամենը այն չէ, ինչ որ հարկաւոր է. նա զուրկ է ամենագլխաւորից, նա չունի այն ինչ որ անհրաժեշտ է ջութակահարին—նա տոն (TONЪ) չունի։ Այդ պատճառով նրա խաղը վերին աստիճանի թոյլ է և չը կատարելագործած, թէև տէխնիքական տեսակէտից մաքուր է։ Նրա խաղի մէջ մի ինչ որ պակաս է, ոչ լիապէս զոհացնող տպաւորութիւն թողնելով. նրա խաղը կարծես մի ինչ որ լաւ բանի արձագանքը լինի, կամ թոյլ տաւերը։

Պ. ալ Մատկովսկի և Պրեսման... բայց լաւ է, որ ես նրանց մասին ոչինչ չասեմ, որովհետև այժմ աշխարհիս երեսին այնքան շատ են դաշնամուրի վրայ լաւ նագողները, որ նագել այդ պարոնների պէս և solo բեմ դուրս գալ կոնցերտներում—մի քիչ բիսկի բան է։

Գուցէ ընթերցողները կամենան լսել նաև նագածու Բարտենեւի մասին, որը կարծես եկել էր Թիֆլիս լատկապէս երկու անլսելի կոնցերտներ տալու համար.—սակայն անցնենք գործին։

Այդ կոնցերտներում կատարւած գրւածքներից առանձին ուշադրութեան են արժանի՝ Մոցարտի, Շումանի և Շուբերտի սիմֆոնիաները, Բիզէի «l'Arlésienne» սիւիտան [1]), «Սիլֆիդների պարը» և «Հունգարական քալլերգը» (маршъ) հեղինակութիւն Բէրլիոզի։

Մոցարտը, Շուբերտը, Շումանը և նոյն իսկ ինքը մեծն Բեթհովենը երաժշտական հսկայ-Յոհան Սեբաստիան Բախի չաջորդներն էին, որը վախճանւել է մօտ 150 տարի սրանից առաջ։ Երաժշտական գրողներից առաջինն է եղել Մոցարտը, ամենավերջինը (կամ ամենանորագոյնը) Շումանը։ Այդ է պատճառը, որ Մոցարտի գրւածքների մեծ մասը այժմ ոչ թէ գոհունակութեամբ, այլ նոյն իսկ չը կամութեամբ է լսւում, այն ինչ Շումանի հեղինակութիւնները մինչև անգամ լաւ երաժիշտներին երբեմն անհասկանալի են թւում։ Բանը պարզ է. Մոցարտը աչքի առաջ ունէր գլխաւորապէս Բախին, այն ինչ Բեթհովենը միահաւասար օգտւում էր Բախից և Մոցարտից։ Շուբերտը ուրիշ բախտաւոր գտնւեց՝ բնութեամբ բոմանտիք լինելով նա ըմբռնեց Մոցարտին լաւով վայելչութիւնը և շնորհալիութիւնը և Բեթհովենի մտքերի բնածին հարստութիւնը և խորութիւնը և այդ ամենը հաշտեցրեց իւր կուսական բոմանտիքական բնութեան մէջ։ Իսկ Շումանը, Բախի և Շուբերտի ամենաթունդ պաշտողը լինելով՝ կատարեալ իրաւամբ պիտի համարւի գերմանական բոմանտիզմի իսկական ներկայացուցիչը։

Ի հարկէ, վերոյիշեալ համերգական կոնցերտներում ամենևին չէր

---

[1]) Սիւիտա անանւում է այնպիսի նագախմբային մի գրւածք, որը բաղկացած է առանձին փոքրիկ մասերից, որոնք իրար հետ կապւած են մի ընդհանուր գաղափարով։

պահպանած պատմական հետևողությունը։ Եւ ինչպէս էր կարող պահպանած լինել։

Առ այժմ մենք նրանով էլ պիտի բաւականանանք, որ Թիֆլիսում բացի օպերաներից մեզ հնարաւորություն են տալիս ծանօթանալու և համերգական երաժշտության հետ։

մալիս 31.

Վաղուց սպասած Շահլամեանը վերջապէս ուաց իւր կոնցերտը երեկ՝ արքունական թատրոնում։ Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։ հանդիսականների մեծամասնությունը հայերն էին կազմում։ Ամենայն անգամ երբ երգիչը բեմ էր դուրս գալիս՝ օդը թնդում էր ծափահարությունների, մանաւանդ երբ նա երգեց «Զայն տուր ով ծովակ»։ Նա ստացաւ մի ահագին պսակ և «կեցցէ Շահլամեան» կրող թերթիկներ թափեցան երգչի վրա երբ նա առաջին անգամ ներկայացաւ հասարակությանն։

Ժամանակի սղությանն պատճառով—հետևեալ անգամ ես կը խօսեմ ուելի մանրամասն կերպով Շահլամեանի արժանաւորությունների և պակասությունների մասին իբրև երգչի։ Առայժմ այսքանը կասեմ որ Շահլամեանը ունի հիանալի տենոր ձայն՝ մեծ չափի և շատ դուրեկան տեմբրի—մանաւանդ բարձր նոտաներում, այն ինչ իսկապէս պահանջւում է տենորից։

Եթէ Շահլամեանի երաժշտականությունը համեմատ լինէր նրա բնապարգև հրաշալի ձայնին—նա իրաւամբ կարող էր հրաշքներ գործել։ Բայց առայժմ այդ այդպէս չէ։ Պէտք է լուսալ որ ժամանակով չնորհիւ պրակտիկալի նա ձեռք կը բերի և երաժշտականությունը և երգել իմանալը։ Այս պատճառով սխալ կը լինի եթէ ընդունենք որ Շահլամեանը արդէն կատարելագործած երգիչ է և այն էլ կոնցերտալին։ Օպերայում նա շատ ուելի իւր տեղումը կը լինի՝ քանի որ օպերայի երգչից շատ ուելի քիչ է պահանջւում նրբություն երգի մէջ, քան կոնցերտալին երգչից։

Ներկայումս պ. Շահլամեանը հրաւիրուած է Պետերբուրգի ռուս օպերային թատրոնը։